ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐ

Ս. Դ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Հայ ժողովրդի միջնադարյան կուլտուրական ստեղծագործության ամենափայլուն բնագավառներից մեկը ճարտարապետությունն է։ Ճարտարապետական արվեստի կոթողների հնությունը պատմական Հայաստանի հողի վրա հազարամյակների անցյալ ունի և իր ստեղծագործական բազմազանությամբ, ձևերի ու ոճերի, կառուցողական տեխնիկայի ու գեղարվեստական հարդարման կատարելությամբ, վաղուց ի վեր պատռել է նեղ-ազգային շրջանակները և մտել համամարդկային կուլտուրայի գանձարանը, գրավելով իր պատվավոր և արժանի տեղը։

Ընդհանուր հիացմունք առաջացնող այդ հազարավոր կոթողներից մեկի առաջ կանգնած դիտողը սակայն, եթե հարցնի այն տաղանդավոր վարպետի անունը, որի ստեղծագործության արդյունքն է իր հիացմունքի առարկան, մենք ստիպված ենք լինում լռելու, որովհետև այդ մասին ոչինչ չգիտենք։ Ոչինչ չգիտենք, որովհետև միջնադարյան մեր աղբյուրները այդ մասին լռում են։

Երկու հիմնական աղբյուրներ կան, որոնց մեջ պետք է որ մեր տաղանդավոր ճարտարապետների մասին հիշատակություններ լինեին՝ մատենագրությունն ու վիմական արձանագրությունները։

Դրանցից առաջինը՝ միջնադարյան մատենագրությունը, ինչպես հայտնի է, մենաշնորհ է եղել կրոնականների համար. կրոնավոր մատենագիրները կյանքի բոլոր խնդիրներին մոտեցել են իրենց կղերա-ֆեոդալական աշխարհայացքի տեսանկյունից. մեր յուրաքանչյուր մատենագրի մոտ բազմաթիվ փաստեր ու նկարագրություններ կան ճարտարապետական խոշոր շինարարությունների, հատկապես վանքերի ու եկեղեցիների շինարարության մասին, ըստ որում այդ առթիվ նաև բազմաթիվ մարդկանց անուններ են տրվում, բայց դրանք բոլորն էլ այն աշխարհիկ ու հոգևորական իշխաններն են, մեկենասները, որոնք շինել են տալիս հուշարձաններ և մեր մատենագիրները բառեր չեն խնայում գովաբանելու այդ ֆեոդալ իշխանների ջանքն ու եռանդը և շինված հուշարձանը նրա փառքի կոթող հայտարարելու համար։ Բայց այն տաղանդավոր ճարտարապետը, որն իր մտքի ու ձեռքի հանճարով է ստեղծագործել իշխանի այդ փառքի կոթողը, մնում է անհայտության մեջ։

Մատենագիրների այս միակողմանի մոտեցման պատճառով է, որ հազարավոր ճարտարապետական կոթողների կողքին ունենք միայն երկու-երեք ճարտարապետների անուններ, ինչպիսիք են հանրածանոթ Տրդատն ու Մանվելը։ Մեր ճարտարապետական փառավոր կոթողների ճնշող մեծամասնությունը մնում են որպես «անհայտ հեղինակի» գործեր։

Ճարտարապետներ երևան հանելու գործում մեր միջնադարյան մատենագրությունը շատ չնչին օգնություն կարող է ընձեռել ուսումնասիրողին։

Այդ խնդրի համար երկրորդ և ավելի հիմնական աղբյուր են վիմական արձանագրությունները։ Սակայն այստեղ էլ կղերա-ֆեոդալական աշխարհայացքն իր միտումնավոր դերն է կատարել մինչև վերջերս։ Ինչպես հայտնի է, վիմական արձանագրություններ հավաքել ու հրատարակել են առավելապես հոգևորականներ կամ կղերա-ֆեոդալական աշխարհայացքի տեր աշխարհականներ, որոնք շատ դեպքերում արձանագրությունների իմաստն աղավաղել են հօգուտ իրենց սկզբունքի. բացի այդ չունենալով գիտական ճիշտ մեթոդ, իրենց վերծանումների ընթացքում նրանք չեն պահպանել արձանագրությունների հնագրական և լեզվական առանձնահատկությունները, որով և, ինչպես կտեսնենք հետագայում, կորել են նաև արձանագրություններում հիշատակված ճարտարապետների անունները։

Մի երրորդ պատճառ էլ պիտի հիշատակել. դա այն է, որ հենց իրենք ճարտարապետներն էլ միշտ չէ, որ իրենց ստեղծագործության վրա որևէ կերպ հիշատակում են իրենց անունը։ Միջնադարյան ճարտարապետն այդ սովորությունը չի ունեցել։ Մեր տաղանդավոր ճարտարապետների մոտ անհատականության գաղափարը զարգացած չի եղել։ Ճարտարապետական կոթողների վրա հարյուրավոր բանվոր վարպետներ են աշխատել, ճարտարապետն իրեն չի առանձնացրել կոլեկտիվից և իր գործը համարել է ոչ թե իր, այլ բոլոր «աշխատավորների» կերտածը, ինչպես հաճախ հիշատակվում է արձանագրությունների մեջ։ Նույնիսկ այնպիսի խոշոր ճարտարապետներ, ինչպիսիներն են Մանվելն ու Տրդատը, որոնք բազմաթիվ կոթողներ են կերտել, ոչ մի անգամ իրենց ձեռակերտներից որևէ մեկի վրա չեն թողել իրենց անվան հիշատակությունը (գոնե մեր ձեռքը այդպիսիք չեն հասել)։

Բայց այն դեպքերում էլ, երբ այնուամենայնիվ ճարտարապետը իր կերտածի վրա հիշատակել է իր անունը, այն աղավաղվել է XIX դարի ճամփորդ-ուսումնասիրողների կողմից, և արվեստի այդ փայլուն գործիչը կրկին մնացել է անհայտության մեջ։

Այս բոլոր պատճառների հետևանքով մեր հարուստ ճարտարապետության կողքին այժմ մենք չունենք մեր մեծատաղանդ վարպետ-ճարտարապետների դեթ անունները, որոնց ստեղծագործած կոթողները ընդհանուրի հիացմունքի առարկան են հանդիսանում։

Մինչև այժմ հատուկ ջանք չի գործադրվել գոնե հնարավորին սահմաններում մեր վարպետներին երևան բերելու ուղղությամբ. մինչդեռ եթե մանրակրկիտ աշխատանք կատարվի մատենագրական աղբյուրների և մանավանդ արձանագրական նյութի մեջ, հնարավոր կլինի գոնե մասամբ երևան հանել մեր ճարտարապետական կոթողների ստեղծագործողներից ոմանց. իսկ դա կարևոր է թե՛ հուշարձանների կատարյալ և ամբողջական ուսումնասիրության, և թե՛ մեր միջնադարյան կուլտուրայի կերտողներին ընդհանրապես հանաչելու տեսակետից։

Միջնադարի ուսումնասիրությանը նվիրված ճամփորդական և հետազոտական աշխատությունների մեջ կան միայն թռուցիկ և շատ ցրված հիշատակություններ այս կամ այն հուշարձանը կառուցող մի քանի ճարտարապետների մասին (գլխավորապես անվան հիշատակություն)։ Իսկ ինչ վերաբերում է հատուկ ուսումնասիրություններին, ապա կարելի է հիշատակել այդպիսիների

որս հեղինակի՝ Կ. Բասմաջյանը համառոտակի թվարկում է մի քանի ճարտարապետների և գրիչների անուններ[1], Գ. Լևոնյանը մի հոդված է նվիրել Տրդատ ճարտարապետի կյանքին ու գործունեությանը[2], Թ. Թորամանյանն իր մեծ աշխատության մեջ երկու հատված է նվիրել նույն Տրդատ ճարտարապետին[3] և Կ. Հովհաննիսյանը մենագրություն է հրատարակել նույնպես Տրդատի մասին ռուսերեն լեզվով[4]։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ԿՈՉՄԱՆ ՀԱՐՑԸ

Ճարտարապետի համար ամբողջ միջնադարում մի որևէ հաստատուն, մասնագիտությանը հատուկ կոչում գոյություն չի ունեցել։ Մատենագրության մեջ գոյություն ունեն բազմաթիվ բառեր—տերմիններ, մեծ մասամբ ընդհանուր իմաստի, որոնց տակ մտել է նաև ճարտարապետը, օրինակ՝ որմնադիր, քարտաշ, քարգործ, գաղատոս, արվեստավոր, ճարտարապետ, վարդապետ, վարդպետ, վարպետ, ուստա, մեյմար։

Կոչումների այս բազմազանությունը կարող է առաջին հայացքից այն սխալ տպավորությունն ստեղծել, որ ճարտարապետ՝ ներկայիս ըմբռնումով, այսինքն մասնագետ, որը թղթի վրա կամ այլ կերպ նախօրոք գծագրում է, կամ մտքով կառուցում-պատկերացնում շինվելիք շենքն իր ամբողջության մեջ և ապա միայն այդ օրինակով կառուցում, իրականում գոյություն չի ունեցել։ Բայց դա միանգամայն սխալ է։ Նախ՝ մեր ձեռքն են հասել բազմաթիվ շենքերի կաղապար-մակետներ, շինված քարից, որոնք պատկերացնում են իրական շենքերի մանրանկարը. հիշենք թեկուզ մեկենասների քանդակները, որոնք իրենց ձեռքում բռնած ունեն շինված եկեղեցիների կաղապարները, ինչպես Գադկաշենի վրա Անիում, Սանահնում, Հաղբատում, Հառիճում և բազմաթիվ առանձնակի մակետներ, որոնք պահվում են Պետ. Պատմական թանգարանում։ Ս. Սոֆիայի գմբեթի նորոգման առնչությամբ Ասողիկը պարզորեն գրում է Տրդատի մասին.

«Այլ անդ դիպեալ ճարտարապետին Հայոց Տրդատայ քարագործի՝ տա զօրինակ շինուածոյն իմաստուն հանճարով պատրաստեալ զկաղապարս կազմածոյն և սկզբնաւորեալ զշինելն, որ գեղեցկապէս շինեցաւ, պայծառ քան զառաջինն»[5]։

Բայց և տեսականորեն անկարելի է պատկերացնել ճարտարապետական այնպիսի բարդ ու հսկայական կոթողներ, ինչպիսիք են, ասենք, Տեկորի, Զվարթնոցի, Հռիփսիմեի տաճարները և հարյուրավոր ուրիշ շինություններ, որոնք հնարավոր լիներ կառուցել առանց նախնական և խիստ ծրագրված, բոլոր մանրամասնություններով ու ճիշտ հաշվումներով պարզ նախագծի։

---

[1] Կ. Հ. Բասմաջյան. Հայոց հին գեղարվեստի վարպետները, Փարիզ. 1926։

[2] Գ. Լևոնյան, Ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը, «Էջմիածին», 1949, № 1—2, էջ 56—66։

[3] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Ի, Երևան, 1948, էջ 42—44։

[4] К. Оганесян. Зодчий Трдат, Ереван, 1951.

[5] Ասողիկ. Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 51։

Ճարտարապետի կայուն ու հստակ կոչումի բացակայության խնդիրն ավելի պարզ կլինի, եթե պատկերացնենք, որ միջնադարում պատանին լավագույն դեպքում տարրական դրագիտություն և հաշվումներ իմանալով՝ մտնում էր անմիջապես գործնական աշխատանքի մեջ որպես քարտաշի, որմնադրի կամ քանդակագարդողի աշակերտ. նա իր մասնագիտության հետ կապված բոլոր գիտելիքները և ունակությունները ձեռք էր բերում գործնական աշխատանքի ընթացքում՝ աստիճանաբար կատարելով որևէ արհեստի կամ արվեստի վերաբերող բոլոր աշխատանքները և հմտանում բոլորի մեջ հավասար չափով։

Պատանի աշակերտը այդ բոլոր աշխատանքների ոչ միայն ամենօրյա ականատեսն էր, այլև մասնակիցը. նա իր ուսումն սկսում էր այդ աշխատանքների ամենապարզից և աստիճանաբար հասնում մինչև ամենաբարդը, եարտարանալով կամ հմտանալով բոլորի մեջ մինչև այն աստիճան, երբ վերջապես նրա հմտությունը, բնածին տաղանդն ու ունակությունները՝ կուտակված երկար փորձի հետ միասին թույլ էին տալիս անվանել նրան վարպետների պետ, ճարտարապետ կամ ճիշտ իմաստով՝ պետն ճարտարաց։ Դարերով, բազմաթիվ սերունդների մեջ կուտակված փորձը տրվում էր նոր մարդուն միանգամայն գործնական եղանակով և մեծ մասամբ նույն ընտանիքի մեջ՝ հորից որդուն փոխանցվելով. ամբողջ միջնադարի համար գործնական նշանակություն ունեցող այս փաստը ձևակերպված ենք տեսնում դեռևս Ղազար Փարպեցու մոտ, որն ասում է.

«Յայտնի է, զի ամէնայն արուեստաւոր, որ զիւր արուեստն ինքն զիտէ և զգաեալ է արուեստէն՝ զնոյն և որդւոց իւրոց կամի ուսուցանել, զի կէցցեն»[1]

Ուսուցման այդ եղանակը կարելի է պայմանականորեն անվանել «փորձառական» կամ գործնական. թված այս պայմանների շնորհիվ էլ, մեկ թվում է, ճարտարապետի համար անխտիր գործ են ածվել շինարարության հետ կապված բոլոր կոչումները։

Վիմական արձանագրությունների մեջ կոչումների թիվը համեմատաբար ավելի քիչ է, այստեղ ունենք՝ վարդապետ, վարդպետ, ճարտարապետ, քարգործ, վարպետ, ուստա և մեմար։ Դրանցից «ուստան», պարսկերեն ծագում ունի, և, ինչպես հայտնի է, տարածված է ամբողջ Արևելքում, իսկ վերջինը՝ «մեյմարը» արաբերեն է և տաճկերենի միջոցով մտել է Հայաստանի արևմտյան մասերը, վերջին դարերում։

Մնացած կոչումները թեև առաջին հայացքից հասկանալի են, բայց իրենց իմաստով անցյալում այլ նշանակություններ են ունեցել, դրանցից հատկապես երկուսի՝ ճարտարապետ և վարդապետ բառերի իմաստաբանական ստուգումն անհրաժեշտ է մեր հիմնական նպատակի՝ ճարտարապետներին երևան հանելու տեսակետից։

1. Ճարտարապետ բառը մեր մատենագրության մեջ շատ է գործածված։ Ասողիկն ու Թ. Արծրունին Տրդատի և Մանվելի համար այդ կոչումն են գործածել. բայց միջնադարում այդ բառի հասկացողությունը բոլորովին այլ է եղել, քան ինչ որ հիմա մենք ենք ըմբռնում։ Միջնադարում այդ բառի իմաստը շատ ավելի ընդհանուր և ընդարձակ էր և կապված չէր որևէ հատուկ մասնագիտության հետ։ Բառարաններն այդ բառի համար տալիս են հետևյալ բացատրությունները։

[1] Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907, էջ 369։

Ճարտարապետ — ճարտարների պետ, ավագ վարպետ, հմուտ վարպետ դանազան արհեստների (հյուսնության, երկաթագործության, որմնադրության և այլն). հմուտ դանազան արվեստների և այլն[1]։

Ճարտարապետ բառը կազմված է ճարտար արմատից, որն ընդհանրապես նշանակում է հմուտ, վարժ արհեստավոր կամ արվեստավոր, այդ նույն արմատից ունենք բազմապիսի բարդություններ. ինչպես, օրինակ, ճարտարախոս, ճարտարարան, ճարտարամիտ, ճարտարարվեստ, ճարտարապետ և այլն, և այլն։ Ճարտարապետ ձևի առաջին ու հիմնական իմաստն է ճարտարների, հմուտների պետ, այսինքն միայն գերադրական աստիճան որևէ արհեստավորի կամ արվեստավորի, նրան իր կոլեգաներից տարբերելու համար։ Որպես ընդհանուր հասկացողություն և մասնավորապես գերադրական աստիճան՝ որևէ արհեստավոր կամ արվեստավոր ինքն իրեն համար ճարտարապետ կոչումը չէր կարող գործածել, դա կլիներ խիստ անհամեստ. այդպես կարող էին կոչել նրան միայն ուրիշները, ինչպես օրինակ, Տրդատին և Մանվելին կոչում են պատմագիրները։ Տեսանք, որ Ասողիկը Տրդատին ճարտարապետ է կոչում, բայց որպես բացահայտիչ այդ կոչմանն ավելացնում է «քարագործ» բառը, իսկ Ռ. Արծրունին Մանվելի մասին գրում է՝ «Եւ քանզի ճարտարապետ արուեստին էր Մանվելն...», այս դեպքում էլ Մանվելը արվեստի ճարտարների պետ է։ Նույնիսկ մեր միջնադարյան երկու այդ մեծագույն վարպետների համար, ինչպես տեսնում ենք, ճարտարապետ կոչումը ոչ թե մեր իմաստով ճարտարապետ է նշանակում, այլ իրենց արվեստի հմուտ պետ։

Այդ իսկ պատճառով էլ, վիմական արձանագրությունների մեջ, նույնիսկ շինարարական բնույթ կրող արձանագրություններում, երբ նույնիսկ վարպետ ճարտարապետի անունն է հիշատակվում, ճարտարապետ կոչումը չի գործածվում։ Եվ ընդհանրապես ճարտարապետ կոչման միայն մեկ դեպք կա արձանագրությունների մեջ, և դա Շիրակի Կարմիր վանք (Գզբլքիլիսե) գյուղի եկեղեցու շինարարական արձանագրության մեջ. 985 թ. այդ ընդարձակ արձանագրությունն ավարտվում է կատուցող վարպետների հետևյալ հիշատակագրությամբ.

«...Եւ զաշխատողս սորա. և տէր Քրիստոս հասարակաց ողոր(մի), ի ձեռն Սամէհանի ճարտարապետի արեղայի...»[2]։

Անցնենք այժմ մեր նյութի համար առավել կարևորություն ունեցող և արձանագրությունների մեջ հաճախ գործածված մի երկրորդ կոչումի՝ տերմինի իմաստաբանական քննությանը. դա է վարդապետ — վարդպետ կոչումը։

Ինչպես ներկայիս, այնպես էլ ուշ միջնադարի մարդու հասկացողությամբ վարդապետ բառի իմաստը սերտորեն կապված էր կրոնի սպասավորների մի հատուկ դասի հետ, բայց վաղ միջնադարում և մինչև XII դարը այդ բառը

[1] Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, III, Երևան, 1944, էջ 204։

[2] Ելիշան, Շիրակ, էջ 169։ Մենք այս միակ դեպքն էլ կասկածելի ենք համարում։ Մինչև այժմ գրականության մեջ հիշատակված կար ճարտարապետ բառի գործածության մի երկրորդ դեպք ևս, որը իբր Սանահին գյուղի աղբյուրի շինարարական արձանագրության մեջ էր, սակայն վերջին ստույգ վերծանումն ապացուցեց, որ դա արտագրողների սխալմունքի հետևանք է. տե՛ս Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 185, հմմտ.՝ Բաջրերունի, «Արձագանք», 1884, № 43, էջ 690, Ի. Հարությունյան, Ազգ. Հանդես, Գ, էջ 308։ Ջալալյան, Ծանապարհորդություն, II, էջ 15։ Հ. Եղիազարյան, Ալավերդու շրջանի կոթողների հուշարձանները, 1952, էջ 18։

հասկացվել է տարբեր իմաստներով։ Վարդապետ բառը ուրիշ շատ բառերի նման ունեցել է իր իմաստի ըմբռնման տարբեր ձևափոխություններ, և հենց այդ բառի իմաստավորումները չտարբերելու հետևանքով է, որ վիմական արձանագրություններ հավաքողները շատ դեպքերում իրական ճարտարապետների փոխարեն երևան են հանել վանական վարդապետների։

Վարդապետ բառը Հայաստանում գործածության մեջ է եղել քրիստոնեությունից առաջ էլ և բոլորովին կապ չի ունեցել կրոնի ու նրա սպասավորների հետ։ Մեր բառարաններն այդ բառի ծագման և իմաստի համար տալիս են հետևյալ բացատրությունը։ Ըստ Սրմատականի.

Վարդապետ. *ուսուցիչ, վարժապետ, առաջնորդ ուսման, արհեստավորաց պետ, վարպետ։*

Ծագումը պահլավերեն (հարավ-արևմտյան բարբառ) varda — *«գործ. աշխատանք» և* pati — *պետ բառից, որով ամբողջը լինում է* vardapati[1]։

Ըստ Մալխասյանի՝

Վարդապետ *(պահլավերեն* varda, *գործ՝ վարժություն, ուսում և պետ)*

1. Ուսման՝ վարժության պետ. աշակերտապետ, վարժապետ.

2. Ուսուցիչ (հին մտքով), որը շուրջը հավաքում էր աշակերտներ, հետևողներ կամ վանքերում ուսուցանում էր միաբաններին.

3. (եկեղ.) գիտական աստիճան, որ մի ժամանակ, հատուկ քննությունից հետո, տալիս էին հոգևորականներին առանձին օրհնությամբ և վարդապետական գավազանով։

Ինչպես տեսնում ենք այս բացատրություններից, այդ բառի նախնական իմաստները բոլորովին էլ կապված չեն եղել կրոնի և կրոնավորի հետ, և հենց այդպիսի՝ գործարար իմաստով էլ գործ են ածվել մեր հնագույն մատենագրական և արձանագրական աղբյուրներում։

Ինչպես հայտնի է, պատմահայր Մովսես Խորենացին ուրարտական շրջանում Հայաստանում կառուցված մի շարք հուշարձաններ վերագրում է Ասորեստանի Շամիրամ թագուհուն և հատկապես Վան քաղաքի, նրա բերդի, ժայռափոր դահլիճների ու ջրանցքի շինարարությունը, ինչպես նաև Վանի բերդի ժայռերի վրայի սեպաձև արձանագրությունների փորագրումը։ Այդ հսկայական աշխատանքների համար, ըստ Խորենացու նկարագրության, Շամիրամը հավաքել է տալիս քառասուն երկու հազար «անարուեստից գործաւորաց» և վեց հազար «յամենայն արուեստաւոր գործաւորաց փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ, որք ամենեքին կատարեալք իցեն յարուեստս գիտութեան»։ Ըստ պատմագրի, առաջին հերթին շինվում է նշանավոր «Շամիրամի» ջրանցքը, դրանից հետո ձեռնարկվում են քաղաքի հիմնադրման և կառուցման աշխատանքները, որի առթիվ պատմահայրը գրում է.

«Եւ անդ հրամայէ զամբոխն ի բաղում դասս որոշել, և ի վերայ իւրաքանչիւր դասուց զընտիրս ի ճարտարացն վարդապետս *կարգել»*[3]։

---

[1] Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան, Զ, Երևան, 1932, էջ 396—397։*

[2] Ստ. Մալխասյանց, *Հայերեն բացատրական բառարան, IV, Երևան, 1945, էջ 309։*

[3] Մովսես Խորենացի, *Պատմութիւն Հայոց, գիրք Ա, գլուխ ԺԶ, 1913։ Խ. Ստեփանեն և Մալխասյանցը Խորենացու պատմության այս հատվածի մեջ վարդապետը թարգմանել են վարպետ, իսկ ռուսերեն թարգմանության մեջ Ն. Էմինը՝* мастер=*վարպետ։*

Խորենացին իր ժամանակ հարկավ ուրարտացիների և նրանց մշակույթի մասին տեղեկություններ ունենալ չէր կարող, բայց չնայած դրան, իրեն հայտնի առասպելական ու ավանդական նյութերի և սեփական դիտողությունների հիման վրա զարմանալի ճշտությամբ տվել է այդ հուշարձանների նկարագրությունը։

Այժմ գիտականորեն ճշտված է, որ այդ բոլոր կառուցումները տեղի են ունեցել ուրարտական պետականության շրջանում, IX—VI դարերում. սակայն մեզ հետաքրքրում է ոչ այդ, այլ պատմագրի կողմից շինարարական աշխատանքների նկարագրությունը և շինարարների դասդասումն ու մանավանդ դրանցից յուրաքանչյուրին տրված անունների և կոչումների խնդիրը։ Իսկ այդ բոլորի համար պատմագիրը հարկ չուներ ավանդություններին դիմելու, դրանք իր ժամանակի երևույթներ ու կոչումներ էին և, հետևաբար, միանգամայն ստույգ։

Խորենացին, ուրեմն, իր ժամանակի հասկանալի և գործուն սովորությամբ գիտե շինարարների երեք խմբեր.

1. Անարվեստ գործավորներ, որոնք ամենամեծ թիվն են կազմում (42 հազար), դրանք արհեստ կամ մասնագիտություն չունեցող, ներկայիս իմաստով սեզոնային բանվորներ են։

2. Արվեստավոր գործավորներ, որոնց քանակը միջին տեղն է բռնում (վեց հազար), դրանք փայտի, քարի, պղնձի և երկաթի մշակման վարպետներ են «կատարեալ ի յարուեստագիտութեան», ներկայիս իմաստով հմուտ վարպետ-արհեստավորներ՝ յուրաքանչյուրն իր բնագավառի մեջ՝ աշխատանքի ղեկավարներ։

3. Վարդապետներ, որոնք ամենաընտիրներն էին ճարտարների (վարժ արհեստավորների) մեջ. դրանց թիվը պատմագիրը չի հիշատակում և հասկանալի է, որ դրանք ամենաքիչը պիտի լինեին. կարգվում էին յուրաքանչյուր դասի (խմբի) ղեկավարներ, ներկայիս իմաստով՝ ինժեներներ և ճարտարապետներ։

Խորենացին ոչ միայն քրիստոնյա էր ու կրոնի հարցերին գիտակ, այլև ինքն էլ կրոնավոր-վարդապետ էր, և եթե վարդապետ կոչումը միայն կրոնավորներին հատուկ լիներ՝ նա հեթանոսական շրջանի շինարարության պետ ինժեներ-ճարտարապետներին այդ կոչումը չէր շնորհի։ Հինգերորդ դարում, Խորենացու ժամանակ, վարդապետ կոչումի հին, գործարար իմաստը կենդանի ու հասկանալի էր Հայաստանում և Խորենացին ազատ կերպով այն գործածում է. սակայն պիտի ենթադրել, որ պատմագրից շատ ավելի հետո էլ այն հասկանալի էր, որովհետև Խորենացու պատմության արտագրողները, որոնք մեծ մասամբ հոգևորականներ են եղել, հեթանոս վարպետների համար Խորենացու գործածած վարդապետ կոչումի մեջ կրոնի դոգմաներին հակասող երևույթ չեն գտել և այդ բառը մի ուրիշով չեն փոխարինել[1]։

---

[1] Հետաքրքիր է այս առթիվ հետևյալ փաստը. Հ. Շահխաթունյան եպիսկոպոսը իր հայտնի աշխատության մեջ Կեչառիսի հուշարձանի բակում կանգնած խաչքարի վրա կարդացել է «Վեցիկ վարդապետ». Սմբատյանը «Վեցիկ վարպետ» է վերծանել և այդ առթիվ նրբորեն կշտամբում է իր նախորդին հետևյալ խոսքերով՝ «Գ. Յով. եպիսկոպոսն Շահխաթունեան այս Վեցիկ վարպետին վարդապետի պատիւ էր տվել», տե՛ս Սմբատյանց, Գեղարքունիք, էջ 355։

Վիմական արձանագրություններից մի հնագույնի մեջ վարդապետ կոչումի ճարտարապետ իմաստով գործածությունը մատնացույց են արել Ալիշանն ու ակադ. Հ. Օրբելին։

Բագրևանդի նշանավոր ս. Հովհաննու վանքի շինարարական արձանագրությունը, գրված 639 թ., վերջանում է հետևյալ նախադասությամբ.

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ ԻՍՐԱԵՂԻ ԳՈՌԱՂՃԵՑԻՈՅ։

Մեջ բերելով շենքի շատ համառոտ նկարագրությունը և արձանագրության պակասավոր բնագիրը, հմուտ Ալիշանն ավելացնում է. «Ճարտարապետն եղեալ է Իսրայէլ», և ապա՝ «իսկ շինուածն արժանի արդարև կայսերն (Հերակլի—Ս. Բ.) և արժանացուցիչ վարդապետին իւրում, այսինքն ճարտարապետին»[1]։

Ակադ. Հ. Օրբելին, որը հրատարակել է շենքի նկարագրությունը և արձանագրության գիտական ու վերակազմած լրիվ բնագիրը, ռուսերեն թարգմանության մեջ այդ նախադասությունը տվել է «при зодчем Израеле Гор'ар'ч'ск(м» ձևով և ծանոթագրել է այսպես. «իհարկե, ներկա դեպքում այս տերմինը չունի գիտունի, դոկտորի իմաստ. այլ ավելի նախնական՝ վարպետի, որպիսի նշանակությամբ նա պահպանվել է մինչև այժմ էլ, կորցնելով միջին դա վանկը—վարպետ»[2]։

ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՌԻ ՆՈՐ ՁԵՎԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ուշ միջնադարում, երբ վարդապետ բառն արդեն բոլորովին կորցրել էր իր նախկին գործարար իմաստը և հասարակության կողմից ըմբռնվում էր միայն կրոնի սպասավորների հետ կապված իմաստով, մեր ճարտարապետները, որոնց մեջ մասնագիտության ինքնագիտակցությունը զարգացել էր, մտցրեցին իրենց կոչումը նշող մի այնպիսի ձև, որն իրենց տարբերի կրոնական վարդապետներից։ XIII դարից ունենք շինարարական բավականաչափ արձանագրություններ, որոնց մեջ մեր վարպետ-ճարտարապետները իրենց նախկին **վարդապետ** կոչման փոխարեն ստորագրում են **վարդպետ** ձևով։

Բազմաթիվ փաստեր ունենք այն մասին, որ վարդպետ ձևը տառերի սովորական սղման հետևանքով չի առաջացել, այլ օգտագործվել է գիտակցորեն՝ որպես վարդապետից տարբեր բովանդակություն ունեցող կոչում։ Վարդպետ ձևը հանդիպում է արձանագրական այնպիսի բնագրերի մեջ, որտեղ կամ ընդհանրապես սղումներ չեն գործածված, և կամ բոլոր դեպքերում սղումների վրա հորիզոնական գծիկ՝ պատիվ է դրված լինում։ Թողնելով դրանցից յուրաքանչյուրի մանրամասն քննարկությունը իր կոնկրետ տեղում, մեջ ենք բերում մի քանի օրինակներ։

Սիսիանի շրջանի Բնունիս գյուղի գերեզմանատանը, որպես գերեզմանի քար օգտագործված է հարևան շենքից վերցրած երեսպատման մի քար, որի վրա չափազանց գեղեցիկ և խորը տառերով գրված է.

ՁԳՐԳՈՐԻԿ ՔԱՀ ՎԱՐԴՊԵՏ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ Ա[3]

---

[1] Ալիշան. *Այրարատ*, էջ 529։

[2] Багаванская надпись 639 г., „Христианский Восток", II, вып. I, 1913. էջ 122։

[3] Վերջին Ա տառից հետո քարի անկյունը կոտրված է, այնտեղ միայն մի տառի տեղ կա. դա պիտի լիներ Ծ, որը նախորդի հետ վրան պատիվ ունենալով՝ պիտի կարդացվեր Աստուած։

Այս արձանագրության մեջ Քրիստոս բառն է միայն սղված և վրան պատիվ ունի. եթե գրիչը Դրգորիկ և վարդպետ բառերը նույնպես սղում համարեր՝ նույնպես պատիվ կդներ դրանց վրա, մանավանդ որ տողամեջերին շատ ազատ տեղեր կան և արձանագրությունը մեծ խնամքով է փորագրված։ Դրգորիկ ձևը Գրիգորիկի գավառական ձևն է, իսկ վարդպետ ձևը հատկապես այն վարդապետից տարբերելու իմաստով է գրված։ Այն հուշարձանը, որի մասն է կազմում արձանագրված այս քարը, շինված է 1291 թվականին։

Սակայն միայն այս կարգի ձևական ապացույցներ չէ, որ ունենք։

Վայոց ձորի նշանավոր Նորավանքի արձանագրություններից մեկը, որը վերաբերում է Տարսայիճ Օրբելյանի կողմից Սիրանես ճարտարապետին եկեղեցի շինել տալու և նրան նվերներ ու վարձատրություն տալու խնդրին՝ ունի հետևյալ նախադասությունը.

...ԵԿԵՂԵՑԻ ՏՎԻ ՇԻՆԵԼ ՍԻՐԱՆԷՍ ՎԱՐԴՊԵՏԻՆ...

Այս նախադասության վարդպետ բառը բոլոր հրատարակիչների մոտ դարձել է վարդապետ։ Սակայն այստեղ վարդպետ-ը վարդապետ վերծանելու ոչ մի հիմք չկա նախ ձևականորեն, գրչության արվեստի տեսակետից, որովհետև ամբողջ արձանագրության մեջ տառերի սղման ոչ մի դեպք չկա, կան միայն միացումների բազմաթիվ դեպքեր և եթե գրիչին պետք լիներ վարդապետ գրելու, ապա նրա համար դժվար չէր լինի վարդպետ բառի միջի ա-ն միացնել աջ կամ ձախ կողմի դ և պ տառերից որևէ մեկի հետ, որպիսի միացումները շատ սովորական են։ Բացի այդ ամենաղլխավորն այն է, այս նույն նյութի մասին գոյություն ունի մի այլ արձանագրություն ևս՝ Գորիսի Շնհեր գյուղի մոտ, մի խաչքարի պատվանդանի վրա, որտեղ նույն Սիրանեսը կոչված է ո՛չ վարդապետ և ո՛չ էլ վարդպետ, այլ պարզապես քարգործ։ Այս երկու արձանագրությունների բովանդակությունից երևում է, որ Սիրանեսը քարգործ-ճարտարապետ է, իր աշխատանքի համար նվեր և վարձատրություն է ստացել դրամով (որը փոխարինվել է ճորտով և հողային կալվածներով)։ Մի բան, որ կարող էր տրվել միայն աշխարհական մարդուն և երբեք՝ մի որևէ վարդապետի անձամբ։

Մեր ասածներին հիմք ծառայող Սիրանես վարդպետ-ճարտարապետին վերաբերող այս երկու կարևոր արձանագրությունները անհրաժեշտ ենք համարում մեջ բերել ամբողջովին։

Ա. Նորավանքում՝ 1275 թվականին Սիրանեսի շինած տապանատուն—եկեղեցու հյուսիսային պատի վրա, արտաքուստ. 4 տող.

ԿԱՄԱԻՆ ԱՅ ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է ՏԱՐՍԱՅԻՃԻՍ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆԻՍ, ՈՐ ԻՇԽԵՑՈՂ ԷԻ ՍԻՆԵՑ ՆԱՀԱՆԳԻՍ ՈՐՈՏԱՆ ԵՒ ՇՆՀԵՐՈՅ. ՈՐ ԵԿԵՂԵՑԻ ՏՎԻ ՇԻՆԵԼ ՍԻՐԱՆԷՍ ՎԱՐԴՊԵՏԻՆ ՈՒ ԶՀԱԼԷԶՈՐԻ ՇՆՀԵՐՈՅ ՆՐԱՅ ՀԱՅՐԷՆԻՔ ՏՎԻ ԻՒՐ ՍԱՀՄԱՆԱՒՔՆ ՅՈՐԴԵՑ ՅՈՐԴԻՔ ՆՐԱՅ ՀԱՅՐԷՆԻՔ ՏՎԻ. ՈՒ ԻՆՉ ԶԷԿԵՂԵՑԻՆ ԼՄՆԵՑԻՆ ԽԻԼԱՅ ԿՈՒՏԱՅԱՔ ,Շ, (500) ՍՊԻՏԱԿԻ ԱՅՆ ԽԻՇԱՅԻՆ ՓՈԽԱՆ ԶԱՂԱԶԱՐ ԸՂՈՒԵՐՇԵՑԻՆ ՏՎԱՔ, ՆՐԱՅ ՀԱՅՐԵՆԻՔ ԼԻՆԻ, Ի ՆՐԱՅ ԳԵՂԻՆ ԿԱՅ ՅԱՁԳԷ ՅԱՁԳ. ՈՒ ԶՀԱԼԷԶՈՐՈՅ ՀԱԿՆ ՍԱՀՄԱՆԵՑԱՔ Ի ՏԱՐՈՒՄՆ ՎԱՅՍՈՒՆ ՍՊԻՏԱԿ ՏԱ, ԱՅԼ ԱՋԱՏ Է ՅԱՄԷՆ ՀԱՐԿԱՅ. ԱՅԼ ՈՉ ԱՄԻՐԱՅԻ ՈՉ ՊԱՐՈՆԻ ՈՉ ՁԵՌՆԱՒՈՐԻ ՈՉԻՆՉ ՀԱՇԻՒ ՉԿԱՅ ՀԵՏ ՀԱԼԷԶՈՐՈՅ, ՈՉ ԻՇՈՐ ՏԱՅ ԵՒ ՈՉ ԱՅԼ ՈՉ ՈՒՄ, ՈՎ ՅԵՏ ՄԵՐ ՁԱՅՍ ՀԱՍՏԱՏ ՎԻՃԻՌՍ ԽԱՓԱՆԷ ՈՒ ԶՄԵՐ ՀՐԱՄԱՆՔՍ ՈՒՆԱՅՆ ԱՌՆԷ,

ՅԵՐԻՑ ՍԲ ԺՈՂՈՎՈՅՆ ՈՐՈՇԵԱԼ ԵՂԻՑԻ ԵՒ ՄԱՍՆ ԵՒ ԲԱԺԻՆ ԸՆԴ ՅՈՒԴԱՅԻ ԵՂԻՑԻ ԵՒ ԸՆԴ ԽԱՉԱՅՀԱՆՈՒԱՅՆ ԵՂԻՑԻ, ԵՍ ՏԱՐՍԱՅԻՆՍ ԻՄ ՁԵՌԱՒՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻ ՁԳԻՐՍ ՁԱՅՍ։

Բ. Գորիսի շրջանի Շնՙեր և Հալիձոր գյուղերի արանքում «Խաչին խութ» կոչված վայրում, որպես վարձատրություն ստացած Սիրանես ճարտարապետի կալվածքի մեջ կանգնած խաչքարի վրա, 18 տող.

1. ԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ ՏԱՐՍ(Ա)Յ—
2. ԻՆՍ ՈՐԴԻ ԼԻՊԱՌՏԻ
3. ՁՀԱԼԻՁՈՐՈՅ ։ Բ ։ ԿՈՊԱ—
4. ՐՍ, ՎՆՍԱՐՍ, ՎՆՍ(ԱՐԱ)Յ ՄԱՐՄԱՆԴ —
5. ՈՎՆ ՍԻՐԱՆԷՍ ՔԱՐԳՈՐԾԻՆ Հ—
6. ԵՐԵՆԻՔ ՏՎԻ. ՈՐԴԻՔ, ԹՈՌՆ ԵՒ ԹՈ—
7. ՌՆ։ ՍԻՐԱՆԷՍ ՔԱՐԳՈՐԾՆ ԵԿԵՂ —
8. ԵՅԻ ՇԻՆԵՑ ԱՆՎԱՐՁ ՆՈՐԱՅՎ —
9. ԱՆՍ, ԵՍ ՁԱՅՆ ՆՐԱՅ ԴԱՏՄԱ —
10. Ն ՓՈԽԱՐԷՆՔ ԱՐԱՐԻ, ՈՐ ՆՐԱՅ
11. ՀԱՅՐԵՆԻՔ Լ(Ի)ՆԻ ՅԱՁԳԷ ՅԱՁԳ. Ո —
12. Վ ՁԱՅՍ ԳԻՐՍ ԽԱՓԱՆԵԼՈՅ ՁԱՆ —
13. ԱՅ ԻՄՈՅ ԿԱՄ ԱԻՏԱՐԱՏ։ ՅԺԸ։ ՀԱ —
14. ՅՐԱՊԵՏԱՅՆ ՆՁԱՎԱԾ ԵՂ(ԻՅԻ)
15. ՄԱՄՆՈՅ ԲԱԺԻՆ ՅՈԴԱՅԻ
16. ԱՌՅԷ. ՀԱՍՏԱՏԱՅ ԳԻՐՍ.
17. ԵՍ ՏՐ ՀԱՅՐ ՎԿԱՅ ԵՄ. ԵՍ
18. ՏՐ ՍԱՐԳԻՍ ՎԿԱՅ ԵՄ[2]։

Կեչառիսի հուշարձանների բակում պատվանդանի վրա կանգնած է մի գեղեցիկ խաչքար, որի պատվանդանի արևմտյան երեսին գրված է Վեցիկ վարդապետ, իսկ նույն խաչքարի թիկունքի մեջ նույն Վեցիկն անվանված է Վեցիկ քարգործ։

Ա.

1. ՁՎԵՑԻԿ ՎԱՐԴՊ
2. ԵՏ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՍ
3. ՁԻՔ Ի ՔՍ. ԱՂԱՁԵՄՔ։

Իսկ խաչքարի թիկունքին 15 տող.

Բ.

1. ՅԻՇԵՍՁԻՔ ՅԱՂԱԻԹՍ
2. ՁՇԱՌԱՅՆ ԱՅ ՁՎԵՑԻԿ
3. ՔԱՐԳՈՐԾ ՈՐ ՇԻՆԵԱՅ ՁՆ —

[1] Այս արձանագրությունն ունեցել է բազմաթիվ հրատարակություններ, տե՛ս Ս. Ջալալյանց. Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Բ, Տփխիս, 1858, էջ 172։ Ալիշան, Միսական, Վենետիկ, 1893, էջ 191։ Քաջբերունի, «Արարատ», 1869, ԺԲ, էջ 658։ Ե. Լալայան. «Ազգագրական հանդես», XXVI, էջ 50։ В. М. Сысоев. Материалы по археологии Кавказа, вып. XIII, Москва, 1916, էջ 183։

[2] Հրատարակել է միայն Ե. Լալայանը, մեծ պղտորումներով. տե՛ս «Ազգագրական հանդես», IV և առանձնատիպ՝ «Զանգեզուր», 1899, Թիֆլիս, էջ 40։

4. ՈՐ ԵԿԵՂԵՑԻՍ, ԵՒ Ի ԿԱՏԱՐՄԱՆ
5. ՍՈՐԻՆ ԻՆՔՆ ԿԱՏԱՐԵԱՑ ՁԿԵՆ —
6. ՅԱՂՍ ԵՒ ՓՈԽԵՑԱՒ ԱՌ ՔՍ.
7. ԿԻՍԱՒՐԵԱՅ ԱՒՈՒՐԲՔ ԵՒ ԵՍ
8. ՅՈՎԱՆՆԷՍ ԵՒ ԵՂԲԱՒՔՍ ԻՄ՝
9. ՀԱՐԱՁԱՏ ՍՈՐԻՆ, ԿԱՆԿՆԵ —
10. ՅԱՔ ՁՍՈՒՐԲ ՆՇԱՆՍ ՔԻ Ի Վ—
11. ԵՐԱ ՀԱՆԿՍՏԱՐԱՆԻ ՍՈՐԻՆ, ԱՌ
12. Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒՐԻ ՍՄԱ ԵՒ Մ --
13. ԵՁ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՒԱՏԱ —
14. ՅԵԼՈՅ ԵՒ ՅԻՇՈՂԱՅՆ Ձ —
15. ՍԱ[1]։

Վայոց ձորի (Եղեգնաձորի շրջան) Հերհեր գյուղի մոտ գտնվող Ս. Սիոն կոչվող վանքի արևելյան պատի տակ, անդունդի շրթունքին, գտնվում է մի տապանաքար հետևյալ արձանագրությամբ.

ԵՍ ՎԱՐԴՊԵՏ ԿԱՁՄԵՑԻ ՏԱՊԱՆԱՆԻՍ ԱՄՈՒՍՆՈՅ
ՍՐԵՐՈՅՍ ՈՁ ՈՐԴԻ ՈՒՆԷՐ ՈՁ ԱՂԲԷՐ. ՈՎ ԿԱՐԴԷՔ
ՅԱՂԱՒՐ[Ս] ՅԻՇԵՑԷՔ Ի Ռ(ՎԻՆ)։Ձ ԽԵ։ (1296)[2]։

Այս արձանագրությունից պարզ կերպով երևում է, որ անանուն վարդապետ-ճարտարապետը աշխարհական մարդ է, որն իր կնոջ համար տապանաքար է շինում։ Միաժամանակ նրա համար վարդապետ կոչումն այնքան ընդհանրացած է և ինքն էլ այնպես է վարժված դրան, որ նույնիսկ իր անունը չի հիշատակում արձանագրության մեջ, այլ միայն կոչումը՝ վարդապետ։

Մեր ձեռքի տակ եղած բազմաթիվ փաստերից բերենք մի շատ բնորոշը ևս, դա հայտնի Սահմադինի դարաբասի-պալատի շինարարության արձանագրությունն է Մրենում, գրված 1261—1276 թթ.։ Այդ արձանագրությունը գրված է պարոն Սահմադինի և նրա գործակատարներից մեկի՝ Սամդինի անունից. մեր նյութի համար շատ կարևոր է, ուստի բերում ենք ամբողջությամբ։

1. ԹՎ։ ՉԺ։ Ի ՏԻԵԶԵՐԱԿԱԼՈՒԹԻ ՀՈՒԼԱՒՈՒ ՂԱՆԻՆ
ԵՍ ՍԱՀՄԱԴԻՆ ՈՐԴԻ [ԱՒԵՏԵԱՅ Գ]ՆԵՑԻ ՁԹԱԳԱՒՈՐԱ —
ՆԻՍՏ [Տ]ԵՂԻ[Ս] ՁՄՐԵՆ Ի ՅԱՐՏԱՇՐԷ ՈՐԴՈ ՇԱՀՆՇԱՀԻ
ՀԱԼԱԼ ԸՆՁ(ԻՑ ԻՄ)ՈՅ Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԻՆՁ ԵՎ ՈՐԴ —
2. ՈՅ ԻՄՈՅ, ԱՄ ՇՆԱՀԱՒՈՐ ԱՐ[Ա]ՍՅԷ ՅԱՒԻՏԵԱՆՍ ԺԱ—
ՄԱՆԱԿԱՅ։ [Ի ԹՎ]։ ՉԻԵ։ ՅԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵ ԱՊԱՂԱ—
ՂԱՆԻՆ. ԵՍ ՍԱՄՏԻՆ, ՈՐ ՊԱՐՈՆԻ ՆՍՏՈՅ ՈՒ ԴԱՐԱՊԱՍ
ՁԿԱՅՐ ՁԱՍ ԱՅԴԻՍ ԵՎ ՁԴՐԱ-
3. ԽՏՍ, ՈՐ ԿՈՁԻ ԱՐՔԱՅՈՒԹԻ, ԳՆԵՑԻ ՁԱՄԷՆ ՄԵԿ ՅԻՒՐ
ՏԻՐՈՁԷՆ, ԵՎ ՅԻՄ ՄՏԱՅ ԴՈՒՍ՝ ԱՌԱՆՑ ՎԱՐԴՊԵՏԻ
ՁԵՎԵՑԻ ՈՒ ՀԻՄՆ ՁԴԵՑԻ ԴԱՐԱՊԱՍԻՍ ՈՒ ԴՐԱԽՏԻՍ

[1] Հրատարակված են՝ Շահխաթունյանց Հովհ., Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ, Բ, էջ 198 (միայն առաջինը)։ Ալիշան, Սիսական, էջ 264, (միայն առաջինը), Լալայան, «Ազգագրական հանդես», XXIII, էջ 131—132։

[2] Հրատարակիչներն արձանագրության մեջ մուծել են Վարդան անունը, որը բնագրում չկա. մենք կրկին անգամ ստուգել ենք տեղում, տե՛ս Ալիշան, Սիսական, էջ 117։ Կոստանյան, Վիմական տարեգիր, էջ 135։

Ի [Ժ] ՏԱՐԻՆ ԿԱՏԱՐԵՑԻ. ԱԾ
ՇՆԱՀԱՒՈՐ ԱՐԱՍՑԷ ՊԱՐՈՆ ՍԱՀՄԱԴԻՆԻՆ, ՈՐԴԻՑ Ի
ՅՈՐԴԻՔ. ՈՒ ԽԱՐՃ, ՈՐ ԵՂԱՒ ԴԱՐԱՊԱՍԻՍ։ Խ։ Ռ։ ԴՈՒԿԱՏ
ԴԱՀԵԿԱՆ[1]։

Այս շատ կարևոր արձանագրության մեջ պարոն Սահմադինի գործակատար Սամդինը պարծանքով հայտնում է, որ առանց վարդպետի ձևել և հիմն է ձգել դարաբասին-պալատին. ամեն կասկածից վեր է, որ այս դեպքում վարդպետ բառը միմիայն ճարտարապետ իմաստով պիտի հասկանալ, քանի որ պարզված է նաև նրա դերը՝ ձևել և հիմն ձգել, այսինքն՝ պլանը գծել և հիմնարկել, դրանք աշխատանքներ են, որոնք բացարձակապես ոչ մի կապ չունեն կրոնի և կրոնավորի հետ։

Այս կարևոր արձանագրությունը հրատարակել է միայն Մառը, այն էլ երկու անգամ, մեկ՝ 1893 թ. որպես նորագյուտ արձանագրություն և մեկ էլ՝ 1934 թ. իր մեծածավալ «Ани» աշխատության մեջ[2] (պարոն Սահմադինի, իր խոսքերով, այդ տիպիկ «բուրժուայի» տնտեսական ու քաղաքական դեմքը բնորոշելու համար)։ Երկու դեպքում էլ Մառը վարդպետ բառի դիմաց դրել է мастер ռուսերեն բառը, որը մեր կարծիքով ճիշտ չէ, կամ առնվազն թերի է, վարդպետ բառը Մառին հիշեցնելով հայերեն վարպետ բառը, լոկ ձևական այդ նմանության հիման վրա թարգմանվել է ռուսերեն հոմանիշ мастер բառով, բայց սոսկ ձևական այդ նմանությունն էլ հենց այլ վերծանողների մտապատկերի մեջ առաջ է բերել վարդապետ բառի հիշողությունը և առիթ տվել վարդպետին վարդապետ դարձնելուն։ Արձանագրության շատ պարզ ու որոշակի բովանդակությունից երևում է, որ գործակատար Սամդինը իր գործը տեսել է ոչ թե առանց որևէ, ընդհանուր իմաստով վարպետի-мастер-ի, այլ ճարտարապետ-վարպետի, որը պետք է գծագրեր ու պալատի հիմքը ձգեր, այսինքն՝ մասնագետ ճարտարապետի։ Սամդինը շրջանցել է ճարտարապետին միայն և ոչ թե կառուցող, քարտաշ վարպետներին. առանց որոնց անհնարին էր պալատ կառուցելը[3]։

ՎԱՐԴՊԵՏ=ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մինչև այժմ վարդպետ=ճարտարապետ կոչումի մեր մեջ բերած բոլոր փաստերը վիմական արձանագրություններից էին։

Արդյոք նույն երևույթը մատենագրության մեջ ևս հանդիպո՞ւմ է, թե՞ ոչ։

Ասողիկի «Պատմության» Կ. Եղյանցին պատկանող ձեռագիր օրինակը, որի հիման վրա Ստ. Մալխասյանցը կատարել է իր հրատարակությունը 1895 թ., երրորդ հանդեսի Խէ գլխում ունեցել է հետևյալ վերնագիրը.

Յաղագս շինելոյն Գագկա արքայի ի քաղաքն
Անւոյ վեկեղեցին մեծ որ անուամբ սրբոյն Գրիգորի.
Միդատ (ընթերցիր՝ Տրդատ)[4] վարպետ եկեղեցւոյն։

[1] Н. Марр, Записки Восточного отделения Рос. археолог. общества, том VIII, вып. I, II, 1893, էջ 82—83։

[2] Н. Марр, Ани, էջ 42։

[3] Երկրորդ հրատարակության մեջ Մառը արձանագրության մեջ ճշգրտումներ է մտցրել, ընդունելով արձանագրության վերծանման առթիվ Մխարանի (Գ. Տեր-Մկրտչյան) դիտողությունները, բայց ոչ վարդապետի վերաբերյալ։ տե՛ս «Արարատ», 1893, Ը, էջ 765, «Նստոց», դիտողություն ուսուցչապետ Ն. Մառի մի նոր աշխատության առթիվ։

[4] Փակագծերի մեջի ծանոթությունը Ստ. Մալխասյանինն է։ Տե՛ս Ստեփաննոսի Յարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 282 և ծանոթ.։

Ստ. Մալխասյանցը խմբագրել և կրճատել է այս վերնագիրը, թողնելով միմիայն՝

> Յաղագս շինելոյն Գագկա արքայի ի քաղաքն Անւոյ զեկեղեցին մեծ անուամբ սրբոյն Գրիգորի։

Խմբագրական ու սրբագրական հմուտ աշխատանքի կողքին, Մալխասյանցը միանգամայն անիրավացի կերպով դուրս է նետել վերնագրի վերջին նախադասությունը, համարելով այն հետագա ներմուծում և տեղավորել միայն ծանոթության մեջ։ Վերնագրի այդ վերջին նախադասությունը՝ Տրդատ վարպետ եկեղեցւոյն, ոչ մի դեպքում չպետք է գրիչների հետագա ներմուծում համարել։ Ինչպես կտեսնենք քիչ հետո, այդ նախադասությունը կա Ասողիկի մի քանի ուրիշ ձեռագրերի մեջ էլ։ Այդ նախադասության մեջ սրբագրության ենթակա միակ բանը վարպետ բառի փոխարինումը պիտի լիներ վարդպետ-ով։

Խնդիրն այն է, որ Կ. Եղյանի ձեռագիրը ըստ հրատարակչի տված տեղեկությունների, արտագրված է 1668 թ. Տիգրանակերտում, Աբրահամ գրչի կողմից[1]։ XVII դարի գրիչը ճիշտ ըմբռնելով վարդպետ բառի անհարիրությունը վարդապետի հետ, սրբագրել է XVII դարին հատուկ վարպետ ձևով. XVII դարում վարդպետ ձևի գործածությունը չկար այլևս։ Բայց և եթե իր ձեռքի տակ եղած օրինակում չլիներ այդ նախադասությունը, գրիչ Աբրահամը XVII դարում չէր կարող այն աստիճան նախանձախնդրություն ցույց տալ Տրդատի հանդեպ, որ նրա անունը մուծեր Ասողիկի գրքի մեջ, այն էլ մի գլխի վերնագրի մեջ։ Այդ նախադասությունն անպայման եղել է գրչի օգտագործած ձեռագրում, և այդ ձեռագիրն էլ շատ հին պիտի եղած լինի, առնվազն XIII դարի, երբ վարդպետ կոչումը ճարտարապետ իմաստով գործածական էր։

Իր առաջաբանում Ստ. Մալխասյանցը հետևյալ կերպ է բնորոշում այդ ձեռագիրը.

> Որպէս ի վերոյ յիշատակեցաք՝ պատմութիւն յայսմ մատենի է մին յընտրելագունիցն յամենայն ձեռագիրս, որք ծանոթքն են մեզ, ըստ լրութեանն և ըստ ուղղագրութեանն։ Զի թէպետ և ԺԷ դարու է գրչութիւն՝ այլ գաղափարեալ երևի ի վաղեմի օրինակէ, ի ձեռն ճարտար գրչի[2]։

Ավելի ուշ, Գագկաշեն տաճարի հեղինակ-ճարտարապետի խնդիրը պարզելու առնչությամբ, Կ. Ղաֆադարյանը մատնացույց արեց, որ 1567 թ. գրված Ասողիկի մի ձեռագիր օրինակը նույնպես այդ լրիվ վերնագիրն ունի համապատասխան գլխում, այսինքն՝ վերջանում է «Տրդատ վարդպետ եկեղեցւոյն» նախադասությամբ, նա ավելացնում է նաև, որ իր կարծիքով Տրդատի անունը գրչի հավելում չպիտի համարել, որովհետև դա կեղծարարություն կլիներ, այլ հավանաբար ավելի հին օրինակներում հենց այդպես էլ եղել է[3]։

---

[1] Ստեփանոս Ասողիկ. Պատմութիւն տիեզերական, առաջաբան, էջ ԼԴ։

[2] Անդ, առաջաբան, էջ ԼԷ։

[3] Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության, Ա, 1942, Երևան, էջ 276, Գ. Լևոնյանը՝ հակառակ Կ. Ղաֆադարյանի՝ կասկածում է այդ նախադասության հնության մասին, բայց իզուր։ Տե՛ս նրա՝ «Ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը», «Էջմիածին», 1949, հունվար—փետրվար, էջ 56։

Ճարտարապետ Կ. Հովհաննիսյանը Տրդատ Ճարտարապետի կյանքին և ստեղծագործությանը նվիրված իր ռուսերեն աշխատության մեջ հայտնում է, որ Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանի հետ ստուգել են Ասողիկի հս երեք ձեռագիր, որոնց մեջ համապատասխան գլուխները նույն լրիվ վերնագիրն են ունեցել։

Ստուգված ձեռագրերը թեև ուշ ժամանակի արտագրություններ են, բայց հմուտ ձեռագրագետ Լ. Խաչիկյանի կարծիքով Ասողիկի ձեռագրերի մեջ հանդիպող վարդապետ Տրդատին նշող այդ մասը XVII դարու արտագրող գրիչների հավելումներ չպիտի համարել, այլ պետք է ընդունել, որ դրանք եղել են այն հին օրինակների մեջ էլ, որոնցից արտագրել են XVII դարու գրիչները։ Այդ ձեռագրերից հատկապես № 4584-ի մասին Լ. Խաչիկյանը այն կարծիքն է հայտնել, որ նա իր առանձնահատկություններով կարող է արտագրված լինել այնպիսի մի ձեռագրից, որը կվերաբերեր առնվազն XII դարին[1]։

Այդ կարծիքներին ի հաստատություն կարող ենք ավելացնել նաև, որ այս աշխատության մեջ վիմական արձանագրություններից հավաքած բազմաթիվ փաստերը ցույց են տալիս, որ վարդապետ-ճարտարապետ կոչումի գործածությունը հասնում է մինչև XIV դարի կեսերը միայն, հետևաբար այն բնագրերը, որոնցից արտագրել են XVII դարի գրիչները Ասողիկի «Պատմությունը», անպայման իրենց հնությամբ XIV դարից այն կողմը պիտի դնել. երկրորդ՝ այդ ամբողջ նախադասությունը իր կառուցվածքով—Տրդատ վարդապետ եկեղեցույս — զուտ արձանագրական բնույթ ունի, որը գրչագիր մատյանների մեջ էլ թափանցել է իր պատրաստի ձևով. դրա բազմաթիվ օրինակները՝ վերցված արձանագրություններից, բերված են մեր այս աշխատության մեջ և վերաբերում են XIII—XIV դարերին։

Այսպիսով պարզվում է, որ վարդապետ կոչումը ճարտարապետ իմաստով սովորական է եղել որոշ դարերում և իրավունք ունենք սպասելու, որ թե՛ արձանագրություններում և թե՛ գրչագիր մատյանների կառուցումներին վերաբերող հատվածներում հոգևորական վարդապետի փոխարեն կհայտնաբերվեն վարդապետ-ճարտարապետներ։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԱՆՎԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

1. Հուշարձանների վրա եղած կառուցողական արձանագրությունների մեջ հանդիպում են շենքի կառուցումը նշող մի քանի տերմիններ՝ հիմնարկել, կառուցել և շինել, դրանցից առաջին երկուսը գործածվել են մեծ մասամբ ավելի վաղ շրջանում, և համեմատարար սահմանափակ քանակով։ Ամենից ավելի գործածական ձևը «շինել» բայն է։ Իրենց հուշարձանի «շինող» են անվանում և՛ թագավորներն ու իշխանները, և՛ վանահայրերն ու առաջնորդները, և՛ ճարտարապետները։

Այդ կարգի արձանագրությունները բաժանվում են երկու խմբի։ Դրանց մի մասի ընդհանուր բովանդակությունից և նրանց մեջ հիշատակված անուններից հստակ կերպով հասկացվում է «շինողի» դերը, այսինքն՝ նա շինել տվող մեկենա՞սն է (աշխարհական և հոգևորական), թե՞ շինող ճարտարապետը։ Բայց

[1] К. Оганесян, Зодчий Трдат, էջ 62—63։

դրա կողքին կան մի մեծ խումբ արձանագրություններ, ուր դժվար է լինում որոշել, թե ո՞վ է այդ «շինողը», մեկենա՞ս, թե՞ ճարտարապետ։ Այդ կարգի արձանագրությունները սովորաբար ընդարձակ բնագիր ունեն, պարունակում են մեկից ավելի անուններ՝ թագավորի կամ իշխանի, կաթողիկոսի, վանահոր և այլն և ունեն հանդիսավոր հրովարտակային բովանդակություն, դրանց մեջ նշված է լինում շինության թվականը և նպատակները՝ ի բարեխոսություն իր տոհմի անդամներից մեկի հոգու փրկության կամ տապանատուն իր տոհմի համար և այլն։ Բայց կան դեպքեր, երբ հենց այդ տիպի արձանագրություններում, որտեղ «շինել» բայը հստակ կերպով վերաբերում է միայն մեկենասներին, և արձանագրությունն էլ իր բովանդակությամբ սպառված է, հանկարծ երևան է գալիս մի հավելյալ նախադասություն՝ թույլ կերպով կամ բոլորովին չշաղկապված նախորդների հետ և այդ նոր նախադասության մեջ հիշվում է մի նոր անուն, որը նույնպես կապ չունի մեկենասների հետ։ Բերենք երկու օրինակ.

Բագրևանդի ս. Հովհաննես եկեղեցու կառուցողական արձանագրության մեջ՝ գրված 639 թ., որպես ժամանակի որոշիչ հիշատակված են Բյուզանդիայի կայսր Հերակլի անունը, եկեղեցին հիմնարկող «հայոց կաթողիկոս և սբ. վանաց երէց» Եզրի անունը, շենքի հիմնադրման և ավարտման մանրամասն թվականները, և ապա այդ լրացած մտքից հետո մի կարճ և նախորդի հետ կարծեր կապ չունեցող նախադասություն ու մի նոր անուն.

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ ԻՍՐԱԷԼԻ ԳՈՌԱՂՃԵՅԻՈՅ.

Դրանից ավելի բնորոշ օրինակ է Անիի բուրգերի շինարարությանը վերաբերող մի այլ արձանագրություն՝ գրված 1160 թ., որը մեջ ենք բերում ամբողջությամբ.

Ի, ՈՐ, (=1160 Թ.) ԹԻ. Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ
ՓԱՏԼՆՈՅ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԷՐ ԲԱՐՍՂԻ
ԵՍ ԱԲՐԱՀԱՄ ՇԻՆԵՑԻ ԶԲՈՒՐՋՍ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ԻՄՈՅ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՎ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՅ. ՈՐՔ ԿԱՐԴԱՑՔ ԶԻՍ ԵՎ ԾՆՈՂՍ ԻՄ ԵՎ ԶԱՌԱՔԵԱԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՍՋԻՔ[1].

Այսպիսի դեպքերում, երբ արձանագրության ընդհանուր բովանդակությունից ու նրա մեջ հիշատակված մեկենասներից անջատ, մի նոր անուն է երևան գալիս արձանագրության մեջ, իրավունք ունենք նրան ճարտարապետ համարելու, այլ կերպ նրա դերը և անվան հիշատակությունը կմնան անհասկանալի։

2. Գոյություն ունի շինարարական արձանագրությունների մի մեծ խումբ, ուր մեկենասը կամ մեկենասները (կարող են նույն ընտանիքի անդամներ կամ շինությանը նյութապես նպաստող մի քանի մարդիկ լինել) իրենց անվան հիշատակությունից հետո հայտարարում են, որ իրենց «շինածը» կատարվել է «ի ձեռն» կամ «ձեռամբ» այս կամ այն մարդու, օրինակ.

ԹԻՒ, ՈԱ, (= 1152 Թ.) ԵՍ ԱՐՏԱՒԱԶ ԵՎ ՍԱՐԳԻՍ
ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿԵՂԵՑԻՍ ԶԵՌԱՄԲ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ[2],

[1] Մարգսյան, Տեղագրութիւնք, էջ 11։ Շիրակ, էջ 40։
[2] Բարխուդարյանց, Արցախ, էջ 340, Սրվեղի վանքից։

կամ՝

...ԿԱՏԱՐԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ, ԶՈՐ ՇԻՆԵՑԻ Ի ԶԵՌՆ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ...[1]

Քննելով նման կառուցվածք ունեցող արձանագրությունները, դժվար չէ եզրակացնել, որ առաջին՝ եթե «ձեռամբ» և «ի ձեռն» բառերից հետո տրված անունը առանց կրոնական աստիճանի է (տեր, վարդապետ, վանահայր, հայր, առաջնորդ և այլն), ապա ուրեմն գրա կրողը անպայման շենքի ճարտարապետն է, ինչպես մեր բերած առաջին օրինակի մեջ։ Երկրորդ՝ եթե այդ անվանը կցված է որևէ կրոնական կոչում, ապա այդ դեպքում արձանագրության հիման վրա, կամ կողմնակի կերպով պետք է ստուգել նրա հարաբերությունը վանքի հետ. եթե պարզվի, որ նա վանքի վանահայրն ու առաջնորդը չէ, որը միշտ նման դեպքերում համարվում է շինարարության ընդհանուր կազմակերպիչն ու ղեկավարը, իրավասուն ու պատասխանատուն մեկենասի հանդեպ. ապա կարող է և շենքի ճարտարապետը լինել, անկախ իր հոգևորական աստիճանից։

Իսկ այն դեպքերում, երբ «ի ձեռն» կամ «ձեռամբ» բառերից հետո եկող անունն ունի հատկապես վարդապետ կոչումը և արձանագրության բովանդակությունից էլ կամ կողմնակի աղբյուրներից պարզվում է, որ այդ ժամանակ վանքի առաջնորդը մի այլ մարդ է եղել, բոլոր այդպիսի դեպքերում իրավունք ունենք հիշված վարդապետին շենքի ճարտարապետը համարելու. ըստ որում, մինչև XII դարը հենց վարդապետ ձևով էլ կարող է գրված լինել արձանագրության մեջ, անկախ նրա հոգևորական կամ աշխարհական լինելու հանգամանքից, իսկ XII դարից հետո՝ բնագրերում այդ բառը վարդպետ ձևով է հանդիպում, անպայման ճարտարապետ իմաստով և գերազանցապես աշխարհական։ Միայն XIX դարի բանասերները, որոնք հավաքել և հրատարակել են արձանագրությունները, գիտակցաբար թե անգիտակցաբար, վարդպետ ձևը համարել են սղում վարդապետի և լրացրել այն, չհասկանալով, որ այդ ձևական կողմից բացի վարդպետն ստացել է բոլորովին նոր բովանդակություն և նշանակում է պարզապես վարպետ-ճարտարապետ։

3. Վերջապես կա արձանագրությունների մի խումբ ևս, որն արդեն զուտ ճարտարապետներին է վերաբերում։ Դրանք կարճ հիշատակարաններ են՝ գրված հենց իրենց, ճարտարապետների կողմից, որով նրանք նշում են հուշարձանը իրենց կողմից կառուցված լինելու հանգամանքը և կամ, ամենաշատը, խնդրում հիշել իրենց։ Արձանագրությունների այս խումբը, որը իր կարճառոտ բովանդակությամբ մոտենում է քարգործ-քանդակազարդող և գրիչ վարպետների հիշատակարաններին, քանդակազարդող վարպետների ստորագրության սովորական ձևն է՝ բաղկացած երկու բառից, օրինակ՝ «Մարգիս կազմող», հավանաբար՝ «Մելիքսէթ կազմող յիշեցէք» ստորագրությունը, իսկ գրիչների համար՝ կամ միայն անունը՝ և կամ ամենաշատը՝ «Սիմոն գրիչ» ձևը։ Ճարտարապետների համար քիչ ավելի երկար հիշատակագրություններ են հանդիպում, քանի որ նրանք շենքերի քանդակազարդողների նման կաշկանդված չեն եղել զարդաքանդակի՝ հատուկ տեղի և փոքր ծավալի տարածությամբ (շենքերի վրա)և

[1] Կ. Ղաֆադարյան, Պատմա-հնագիտական դիտողություններ։ Տեղեկագիր Արմֆանի, 1940, № 4—5, էջ 169, Շամշադինի շրջանի Նոր-Վարագ վանքից։

չափազանց սահմանափակ տեղամասով (խաչքարերի վրա), այլ շենքի մի որևէ ոճավորված տեղում են գրել։

Բերենք մի քանի օրինակներ.

Մեր հնագույն ճարտարապետներից մեկը, որը կառուցել է Աթենի տաճարը (Վրաստան), իր ձեռակերտ կոթողի պատի վրա գրել է.

ԵՍ ԹՈՂՈՍ[ԱԿ] ՇԻՆՈՂ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵ[ՑԻՈ]Յ...[1]։

Գեղարդի հռչակավոր ժայռափորերի տաղանդավոր ճարտարապետ Գալ-ձագը ժայռափորերից մեկի երդիկ-լուսանցքի տակ հիշատակագրել է.

ԶՎԱՐԴՊԵՏ ԳԱԼԶԱԳ ՅԻՇԵՑԷՔ։

Այս առթիվ պիտի նշենք նաև, որ նման կարճ հիշատակագրություններ ճարտարապետները թողնում էին շինության որևէ ձևավոր և ակնառու տեղում, իսկ գավիթներում՝ թաղերի հիմքը հանդիսացող քառակուսի շրջանակների և հատկապես արևելյան շրջանակի վրա, որը ներս մտնողի կողմից կդիտվեր անմիջապես, հետագայում այդ լուսանցք-երդիկներից ներս հոսող անձրևաջրերի հետևանքով խիստ վնասվում էին ճարտարապետների այդ հիշատակագրությունները։

Այս տիպի մի ցավալի օրինակի հանդիպեցինք Նոր-Բայազետի շրջանի նշանավոր Հայրավանքում. հուշարձանի գավթի երդկաթաղի արևելյան շրջանակին մնացել է վարդապետի հիշատակագրությունը, բայց ամենակարևոր մասը՝ անունը իսպառ ոչնչացել է. ահա այն.

...Վ]ԱՐԴՊԵՏԱ ՅԻՇԵԼ ԱՂԱՋԵՄ.

Չնայած միանգամայն հասկանալի է այս կարճ հիշատակագրությունների պարզությունը, արձանագիր վերծանողները այսպիսի դեպքերում էլ հաճախ տարվելով չարաբաստիկ վարդապետ-ի մոլորությամբ, շատ վարդապետների դարձրել են վարդապետներ. կան նույնիսկ դեպքեր, երբ վարդպետ բառը վարդապետ վերծանելու հետևանքով ոչ միայն ճարտարապետն է կորել, այլև ինքը արձանագրությունն անիմաստ է դարձել, և այդ բանն զգացել է վերծանողը, բայց վարդապետի մասին ունեցած իր համակրանքը և կանխամտածությունն ստրգելել են նրան կռահելու ճշմարտությունը և նա ընկել է զանազան անմիտ ենթադրությունների մեջ՝ արձանագրությանը իմաստ տալու համար։

Արցախում, Հացի գյուղի մոտ, կան ավանանման շենի ընդարձակ ավերակներ, ուր բացի տնատեղերից կան նաև մի քանի եկեղեցիների, մատուռների ավերակներ ու ընդարձակ գերեզմանատուն. երկու փոքրիկ կիսավեր մատուռների վրա ըստ հրատարակիչների կան հետևյալ կարճ հիշատակարան-արձանագրությունները՝

ՁՇԱՀԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՏԷՐ[2]

և մյուսը՝

ՁԽԱՉԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ
ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ[3]։

---

[1] Լ. Ալիքսեր-Ռեկ. VII դարու հայերեն արձանագրությունները Վրաստանում, Տեղեկագիր ԳԱ, № 5, 1945, էջ 1–6 (արձանագրությունը պակասավոր է – Ս. Բ.)։

[2] Բարխուդարյանց, Արցախ, էջ 125։

[3] Լուսյան, «Ազգ. Հանդ.», Բ, էջ 48։

Այս արձանագրությունների բովանդակությունն ըստ էության անմիտ է, որովհետև եկեղեցիների պաշտոնյաների մեջ վարդապետ չի լինում, իսկ տվյալ դեպքում սրանք նույնիսկ եկեղեցիներ չեն. այլ փոքրիկ մատուռներ։

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը՝ այդ հուշարձանների առաջին այցելուն և արձանագրությունների վերծանողը, զգացել է այդ անհարիրությունը և փոխանակ ուշադիր քննելու արձանագրությունների գրչությունը, հորինել է մտացածին մի պատմություն այն բացատրելու համար. իբր այդ մատուռներում ժամանակին թաղվել են Աղվանից թագավորների և իշխանազունների աճյունները և յուրաքանչյուր մատուռում կարգվել է մի վարդապետ աղոթավոր։ Բայց հենց իր նկարագրությունից երևում է, որ նրանց մեջ նախ՝ գերեզմանի նշույլ չկա, ապա՝ նրանց վրայի գրությունները ցույց են տալիս, որ դրանք ոչ թագավորների և ո՛չ էլ իշխանների կառուցումներ են, այլ ինչ-որ քահանայի և իր երկու եղբայրների՝ ի հիշատակ իրենց տոհմի և ծնողների[1]։

Այս խմբի արձանագրություններն իրենց կարճ ոճով պետք է դիտել որպես հեղինակային ստորագրության կայուն ձև՝ հատուկ միմիայն ճարտարապետներին և սովորություն դարձած։ Մենք հնարավորություն ենք ունեցել ստուգել դրանք Սյունիքի մի շարք վայրերում, Գեղարդում, Հաղարծինում և այլուր և գտել ենք, որ ամենուր այդ հիշատակարան-արձանագրությունների մեջ վարդապետ է գրված։ Հաստատապես կարող ենք ասել, որ այս կարգի արձանագրությունները ամենաապահով միջոցն են մեր միջնադարյան ճարտարապետներին Երևան հանելու համար։ Թեև իրենց հակիրճությամբ նրանք միայն հեղինակների անուններն են մեզ հաղորդում, բայց նկատի ունենալով հենց այդ հարցում մեր անգիտությունը, նրանք առայժմ թանկագին արժեք ունեն, և հաճախ սոսկ անունների հայտնաղործումով պարզվում են այս կամ այն ճարտարապետի կապերը մի քանի հուշարձանների հետ և ստեղծվում են ավելի լայն հնարավորություններ նրանց կյանքն ու գործունեությունը պարզելու համար։ Այսպիսի մեկ հատիկ անունով Այսասիի փառավոր հուշարձանի հեղինակը նույնանում է Նորավանքի հուշարձաններից մեկի հեղինակ Սիրանեսի հետ, Ասողիկի համապատասխան գլխում վարդապետ Տրդատի սոսկ անվան հիշատակումով լուծվում է Գագկաշենի հեղինակի մասին եղած վեճը և այլն։

Ամփոփելով վիմական արձանագրությունների օգնությամբ մեր տաղանդավոր ճարտարապետներին Երևան հանելու վերաբերյալ մեր ասածները, կարելի է անել հետևյալ կարևոր եզրակացությունները.

1. Միջնադարյան Հայաստանում ճարտարապետների համար հատուկ կոչում չի եղել, թե՛ մատենագիրները և թե՛ վիմական արձանագրությունները գործ են ածել բազմաթիվ և ընդհանուր կոչումներ միայն։

2. Եղած կոչումներից մեկն էլ վարդապետ կոչումն է ճարտարապետ իմաստով, որը վաղ միջնադարում արձանագրությունների մեջ գործ է ածվել իր հին, գործարար իմաստով, բայց դեռ չի պարզված, թե մինչև երբ։

3. XII դարից, երբ վարդապետ հասկացողությունը բոլորովին մերվել էր կրոնավոր հասկացողության հետ, ճարտարապետները այդ բառի միջից ջնջելով ա տառը, վերածում են վարդպետ ձևի, որին տալիս են միանգամայն նոր իմաստ, այն է՝ հոգրտարապետ։

---

[1] Բարխուդարյանց, Արցախ, էջ 125։

4. Ուշ միջնադարում վարդպետ ձևի միջից ջնջվում է նաև դ տառը, և այն դառնում է մեր այսօրվա վարպետը, որը արդեն նույնպես ընդհանուր իմաստ ունի և այլևս չի նշանակում լոկ ճարտարապետ։

5. Վարդապետ = վարդպետ = վարպետ բառի իմաստաբանական այս ըմբռնումների՝ ըստ դարաշրջանների նկատի առնելը և նրանց կիրառումը վիմական արձանագրությունների վերծանման ընթացքում, երևան են բերում մի քանի տասնյակ մինչ այժմ անհայտ ճարտարապետներ, միանգամայն աշխարհական մարդիկ, որոնք կերտել են մեր փառավոր հուշարձանները։

6. Շինարարական բնույթ կրող բոլոր արձանագրությունները, որոնց մեջ որպես կառուցող հիշատակված են վարդապետներ, պետք է այս առումով վերանայվեն, որովհետև դրանցից մեծ մասը ոչ թե մեկենասներ են. այլ կառուցող ճարտարապետներ, որոնք վաղ շրջաններում կարող էին նաև վարդապետ կոչվել, իսկ ավելի ուշ՝ վարդպետ։

7. Մեր ստուգումները ցույց են տալիս, որ վերծանող-հրատարակիչների մոտ վարդապետ կոչված բազմաթիվ շինարարներ, գրված են իրականում վարդպետ ձևով XII—XIV դարերում և այդ կոչումը միմիայն ճարտարապետ է նշանակում և աշխարհիկ անձնավորություն։

8. Անվստահությունը եղած հրատարակությունների նկատմամբ և վարդապետ, վարդպետ կոչումների ստուգումը տեղում կամ լուսանկարների միջոցով է՛լ ավելի կճշտի ըստ դարաշրջանների դրանց գործածության սահմանները ճարտարապետի իմաստով մի կողմից, և մյուս կողմից՝ երևան կհանի բազմաթիվ ճարտարապետական կոթողների մեր տաղանդավոր արվեստագետ ճարտարապետներին։

Ղեկավարվելով մեր մշակած այս մեթոդներով, արդեն հաջողվել է այս ու այն կերպ մինչև այժմ մեզ հայտնի մեկ տասնյակի չափ միջնադարյան տաղանդավոր արվեստագետ-ճարտարապետների թիվը հասցնել մինչև ութսունի։

Բուն ճարտարապետներին զուգընթաց կարողացել ենք հայտնաբերել նաև մեծ քանակությամբ, այսպես կոչված, օժանդակ վարպետների անուններ. դրանք ճարտարապետական շենքերի վրա աշխատած քանդակազարդող և արձանագրություններ փորագրող մեր տաղանդավոր վարպետներն են, որոնք մեծ շենքերի ընդհանուր ձևավորման աշխատանքներին մասնակցելուց բացի՝ կերտել են նաև բազմաթիվ մեծարվեստ փոքր հուշարձաններ և խաչքարեր, տապանաքարեր և այլն։ Այս վերջին խմբի վարպետների թիվը արդեն հասնում է 175-ի, ասել է՝ բուն ճարտարապետների հետ ընդամենը 255 անուն։ Մի պատկառելի թիվ մեր միջնադարյան տաղանդավոր արվեստագետների, որոնք մինչ այժմ մեծ մասամբ մնացել էին անհայտության մեջ։ Այս հանգամանքը խոշորագույն հնարավորություններ է ընձեռում այսուհետև մեր միջնադարյան ճարտարապետական մեծ ու փոքր հուշարձաններն ուսումնասիրել իրենց իսկական հեղինակների անվան հետ շաղկապված, վեր հանել ժողովրդի ծոցից ելած այդ տաղանդավոր վարպետներից յուրաքանչյուրի արվեստի առանձնահատկությունները, որոշել նրա ակունքներն ու հետագա ազդեցությունները, այլ խոսքով՝ որոշել արվեստի դպրոցներն իրենց տաղանդավոր հիմնադիրներով։

СРЕДНЕВЕКОВЫЕ АРМЯНСКИЕ ЗОДЧИЕ

С. Г. БАРХУДАРЯН

(Резюме)

В культурном наследии армянского народа выдающееся место занимает средневековое архитектурное искусство. Благодаря своим высоким художественным достоинствам и самобытности оно вошло в сокровищницу общечеловеческой культуры.

Однако при наличии тысяч замечательных памятников архитектуры, мы до сих пор не располагаем почти никакими сведениями об их авторах. В научной литературе известны лишь имена Манвела, Трдата и двух-трех других зодчих.

Благодаря своему клерикально-феодальному мировоззрению армянские летописцы не считали нужным сохранять имена талантливых сынов армянского народа и упоминать об их деятельности. По той же причине, а иногда и несознательно, авторы, собиравшие и публиковавшие лапидарные надписи, упоминавшихся в этих источниках архитекторов превращали в духовных лиц — монахов. Утвердившийся в настоящее время в армянском языке термин «чартарапет» (архитектор) в средние века имел совершенно иной смысл. Он состоит из двух слов: «чартар», что означает искусный, опытный в какой-либо специальности, и «пет» — начальник, глава.

Вместо нынешнего «чартарапет» в древние и средние века в армянском языке были приняты другие термины, например, вардапет, вардпет, мастер по камню, варпет, уста и меймар (последние два слова — персидского и арабского происхождения. Они употреблялись лишь в последние века).

Самым древним в армянском языке термином для обозначения понятия архитектор является слово вардапет. Это слово заимствовано из пехлевийской формы vardapati, что означает начальник, глава какого-нибудь дела или специальности. В древности в армянском языке оно употреблялось именно в этом смысле.

В XI—XII вв. слово вардапет было принято исключительно в духовной среде и уже означало учитель, ученый, поэтому архитекторы, чтобы отличиться от монахов, называли себя не вардапетами, а вардпетами. Позже, с 14 века, это слово видоизменяется еще более и превращается в современное «варпет» (мастер).

Выяснение смысловой эволюции слова «вардапет» дало возможность автору выявить имена 80 талантливых архитекторов, строителей таких выдающихся памятников армянского зодчества, как Гегард, Тегер, Аратес, Нораванк и другие.